



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«12» 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 157 - 24

Նախաձեռնող՝

«Տուրալ Շին» ՍՊԸ
Լենինգրադյան փ. /27/11 Աջափնյակ 0031

Գործունեությունը՝

Լենինգրադյան փողոց 19/12 հասցեում
նախարեսվող բազմաբնակարան
բնակելի համալիրի կառուցում
Մալաթիա-Սերաստրիա վարչական շրջան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 157 - 24

«12» օգոստոսի 2024թ.

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան Լենինգրադյան փողոց 19/12 հասցեում
նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «Տոտալ Շին» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն,
նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոց 19/12 հասցեում (Երևանի քաղաքապետարանի կողմից տրված՝ 2024թ. մարտի 11-ի հ.922-Ա որոշման համաձայն, Լենինգրադյան փողոցի 27/11 և 27/14 հասցեներում գտնվող հողամասերի /վկ. հհ.22122023-01-0167 և 22122023-01-0125/ մեկ միասնական հասցեի տրամադրում՝ Լենինգրադյան փողոց 19/12):

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի հարավ արևմտյան շրջանում: Տարածքին բնորոշող ռելիեֆային հիմնական տարրերն են՝ Եղվարդի հրաբխային սարավանդերի հարավային ծայրամասային լանջերը:

Համաձայն ներկայացված ուսումնասիրության արդյունքների տեղամասում միջև 22 մ



խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում են 50 մետրից խորը հորիզոններում:

Հողամասը կառուցապատված չէ: Տարածքում հատման ենթակա ծառեր չկան: Հողաբուսաշերտը բացակայում է:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Բնակելի համալիրը բաղկացած կլինի 16 վերգետնյա և 3 ստորգետնյա հարկերից: Առաջին հարկում տեղակայված կլինեն հասարակական և կոմերցիոն սենքերը, 2-16-րդ տիպարային հարկերը կշահագործվեն որպես բնակելի տարածքներ, իսկ 15-16-րդ հարկերը կունենան կասկադաձև ճարտարապետական լուծում: Տիպարային հարկերի բարձրությունը (հարկից հարկ) կկազմի 3.3 մ: Բնակելի համալիրը բաղկացած կլինի 3 մասնաշենքից՝ 3 շքամուտքով, յուրաքանչյուրում նախատեսված է 2 վերելակ: Համալիրի շքամուտքի տարհանման ելքերում նախատեսված են հակահրդեհային, ինքնափակվող դռներ: Շքամուտքի միջանցքում նախատեսված է իրականացնել ծխահեռացման ինքնաշխատ համակարգ:

Համալիրում նախատեսվում են 2-5 սենյականոց բնակարաններ, որոնց ընդհանուր քանակը կկազմի 247 հատ:

Բնակելի համալիրի նկուղային -1 հարկի նիշը կլինի -3.90, -2-րդ հարկի նիշը՝ -7.50, նկուղային -3-րդ հարկի նիշը՝ -11.10: 2-րդ հարկի հատակի նիշը կազմում է 4.500 մ, իսկ շենքի ամենաբարձր կետը գտնվում է 58.60 նիշում: Ստորգետնյա հարկերը կկիրառվեն որպես ավտոկայանատեղի՝ նախատեսված մինչև 175 ավտոմեքենաների համար:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ և միջոցառումներ՝ դեպի բնակելի և հասարարական տարածքներ:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է ՎՋ2606/2023 ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայման: Ջրամատակարարումը կիրականացվի տարածքի հարևանությամբ անցնող ջրատարից, կոյուղին՝ կմիացվի Լենինգրադյան փողոցով անցնող կոյուղատարին:

Բնակելի համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների:

Գազամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի՝ Երևան 4 ԳԲԿ-ն սնող կողմնատար գազատարից:

Բնակելի համալիրի խոհանոցներից, ս/հանգույցներից և լողասենյակներից օդափոխությունը նախատեսվում է բնական՝ օդատարերով, իսկ յուրաքանչյուր ստորգետնյա հարկի համար՝ առանձին մեխանիկական դրդմամբ օդափոխության համակարգեր:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 3000 քմ,



- համալիրի վերգետնյա կառուցապատման մակերես՝ 1305 քմ (43.5 %),
- կանաչապատման մակերես՝ 1236.26 քմ (41.2 %)
- անջրանցիկ մակերես /հետիոտն և ավտոմոբիլային ուղիներ, խաղային և սպորտային հրապարակներ/ 459.36 քմ (15.3 %),
- ստորգետնյա -1 հարկի մակերես 2545.2 քմ,
- ստորգետնյա -2 հարկի մակերես 2545.2 քմ,
- ստորգետնյա -3 հարկի մակերես 2545.2 քմ:

Հիմքերի փորման աշխատանքների իրականացման ընթացքում ե/բ հիմքերի տեղադրման համար նախատեսվում է իրականացնել մոտ 15000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող զանգվածը՝ 11500 խմ ծավալով, կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն տեղանքին բնորոշ ծառեր և թփեր: Կանաչապատման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային եղանակով:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի կիրառման, բետոնային աշխատանքների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն առաջացող փոշու արտանետումների հետ՝ հիմքերի փորման, շինարարության ընթացքում, նաև վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է՝

- ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում 100 խմ ծավալով տարողությամբ պլաստիկ տարողությամբ պարզարան, որտեղ մեխանիկական նստեցումից պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի:

Հողային ռեսուրսների պահպանության համար՝

- շինարարական գործընթացներում կիրառվող տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է, որ այդ տարածքներում



ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,

- կկիրառվեն ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- կիրականացվի տարածքի բարեկարգում և կանաչապատում:
Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանան՝
- շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- կենցաղային աղբ, որը կհավաքվի աղբահավաք տարաներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտը, որը կտեղափոխվի ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների (հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն) հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝

- խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց՝ բնակելի տների և այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին,
- աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ սարքավորումների և կոնստրուկցիաների կիրառում, աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերի պահպանում, չափագրում,
- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում՝ աշխատողներին

ականջակալներով ապահովում:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,



- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- կառուցապատման տարածքի և հարևան տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը հետևողական լինի տնկված ծառերի աճին և խնամքին:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 2520000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:



4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ համաձայն Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
6. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետի մասնակցությամբ իրականացնել նախատեսվող գործունեության տարածքի բուսական ծածկույթի ուսումնասիրություն, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշման՝ ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված Նվարդակ քնարածև-Lepidium lyratum L. բուսատեսակի տարածման արեալն ընդգրկում է նաև Երևանի ֆլորիստիկ շրջանը, ինչի արդյունքում վերոնշյալ բուսատեսակի հայտնաբերման դեպքում ըստ անհրաժեշտության իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ տվյալ բուսատեսակի պահպանության համար:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Տոտալ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոց 19/12 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Սվետլանա Կիզիրյան

